



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների
ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 3 (4)

2008թ. հունիս – սեպտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Չայաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում է չի տրամադրում համայնքների կողմից նախաձեռնվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ ուրուր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները եւ կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

ԵՅԳԾ համաժողով 2008

ԵՅԳԾ համայնքների քաղաքացիական գործողությունների 2-րդ ամենամյա համաժողովը տեղի ունեցավ 2008թ. սեպտեմբերի 3-5-ը Ծաղկաձորում: Համաժողովի մասնակիցներն էին թվով 160 ներկայացուցիչներ ԵՅԳԾ բոլոր 80 քաղաքացիական խմբերից, որոնք հավաքվել էին քննարկելու ընդհանուր խնդիրներ եւ հարցեր, կիսելու իրենց փորձը եւ քաղված դասերը, խթանելու համագործակցությունը եւ ավելի սերտ աշխատանքային հարաբերություններ հաստատելու հանրապետությունում գործող քաղաքացիական խմբերի հետ: Համաժողովի ընթացքում ԵԳԱ/ՀԳՀ անդամները մասնակցեցին հետեւյալ թեմաներով ինտերակտիվ հանդիպում-սեմինարների. Քաղաքացիական մասնակցությունը Չայաստանում, Համայնքի բնակիչների ներգրավում, Առաջնորդություն/հսկի դի-նամիկա, Ծրագրի կառավարում, Քաղաքացիական շահերի պաշտպանություն, Հանրայնության հետ կապեր, Տեղեկատվության ազատություն, Համայնքի տեղեկագրերի կատարելագործում եւ այլն: Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաեւ «Բաց տարածություն» մեթոդով կազմակերպված նիստ՝ «Քաղաքացիական շահերի պաշտպանությունը տեղական, մարզային եւ ազգային մակարդակներով» թեմայով: Քաղաքացիական շահերի պաշտպանության մեթոդների վերաբերյալ իրենց գիտելիքները հարստացնե-

լուց հետո, մասնակիցները աշխատեցին 10 խմբերով՝ մշակելու իրենց կողմից առաջադրված համարված խնդիրների լուծման ուղղված քաղաքացիական շահերի պաշտպանության ռազմավարություններ եւ քարոզարշավներ: Մասնակիցների կողմից բարձրացված եւ քննարկված հարցերից էին երիտասարդության խնդիրները, գործազրկությունը եւ համայնքներում աշխատատեղերի ստեղծումը, խոցելի խմբերին պատկանող անձանց կարիքների հասցեագրումը, համայնքներում սպորտի զարգացումը, զգաձֆիկացումը, կրթական համակարգի բարելավումը, առողջապահական ծառայությունների մատչելիությունը, ոռոգումը եւ գյուղատնտեսական մթերքների իրացումը: Մասնակիցները մշակեցին այդ խնդիրների լուծման համար քա-

ղաքացիական շահերի պաշտպանության քարոզարշավների ծրագրեր եւ իրենց աշխատանքների արդյունքները ներկայացրեցին Համաժողովի 3-րդ օրը: Համաժողովի ընթացքում գործում էր նաեւ ցուցահանդես, որտեղ բոլոր 80 ԵԳԱ/ՀԳՀ-ները ներկայացրել էին իրենց կողմից համայնքներում իրականացված աշխատանքները: ԵՅԳԾ համաժողովը հիանալի հնարավորություն էր Չայաստանում գործող ԵԳԱ/ՀԳՀ-ների ուժեղացման համար. այն ամրապնդեց նրանց միջեւ փոխադարձ կապը, խթանեց գաղափարների փոխանակումը, ինչպես նաեւ մեծացրեց իրազեկությունը քաղաքացիական հասարակության զարգացման գործում համայնքաին կառույցների ունեցած կարելու դերի մասին:



ԵՅԳԾ համաժողովի մասնակիցները Համաժողովի նիստերից մեկի ժամանակ

Արագածի ՀԳՀ-ն շարունակում է պաշտպանել համայնքի բնակիչների իրավունքները

Արագածի ՀԳՀ-ն (Արագածոտն մարզ) հետեւողական է իր կողմից դեռեւս 2007թ. նոյեմբեր ամսին իրականացված նախաձեռնությանը, երբ ՀԳՀ-ն՝ արծազանքելով բնակիչների կողմից բարձրացված հարցին, Արագած գյուղի եւ Ապարանի տարածաշրջանի 25 համայնքների ղեկավարների հետ հանդիպման էր հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մամուկ Վարդանյանին եւ Աժ պատգամավոր Լյուկա Խաչատրյանին՝ քննարկելու քաղաքացիներին պատկանող հողի եւ անշարժ գույքի չափագրումներում թույլ տրված անճշտությունների

հարցը: Բնակիչներին պատկանող հողի եւ անշարժ գույքի սեփականության վկայականներում նշված անճշտությունները դարձել էին բազմաթիվ վեճերի, խնդիրների եւ բողոքների առարկա: Այս տարվա սկզբին, ինչպես այդ հանդիպման ընթացքում խոստացել էր պրն. Մամուկյանը, կազմվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք յուրաքանչյուր համայնքում զբաղվել են վերաչափագրումների իրականացմամբ: Արագած գյուղի հանձնաժողովը, որը կազմված է Ապարանի տարածաշրջանային կադաստրի, Արագածի գյուղապետարանի եւ Արագածի ՀԳՀ-ի ներկայացուցիչներից, աշխա-

տանքն սկսել է զարմանք եւ այն դեռեւս ընթացքի մեջ է: ՀԳՀ-ն շարունակում է ակտիվորեն ընդգրկված լինել այդ գործընթացում: Մինչեւ ս.թ. սեպտեմբեր գյուղում վերաչափագրվել է բնակիչների պատկանող 50 հողակտոր, որոնք սեփականատերերն ստացել են սեփականության նոր վկայականներ՝ հողի եւ գույքի ճշտված չափերի գրանցմամբ: Հանձնաժողովը շարունակում է իր աշխատանքը վերաչափագրումների դիմումներ ներկայացրած բնակիչների ցուցակի հիման վրա: Վերաչափագրման աշխատանքները կշարունակվեն նաեւ 2009թ-ի ընթացքում:

Այս համարում նաեւ	
<i>Սառնակունք համայնքի խնդիրները՝ ներկայացված պատասխանների միջոցով</i>	2
<i>Բանակեճ Գետափի ԵԳԱ-ում՝ Հայաստան - Թուրքիա հարաբերություններ</i>	2
<i>«Քաղաքացիական հասարակություն» խորագրով երիտասարդական ծանօթար Սառնադրյուրում</i>	2
<i>Սերոռձորցիները պաշտպանում են իրենց իրավունքները</i>	2
<i>ԵՅԳԾ խմբերը գործում են՝ խթանելու համայնքի բնակիչների քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին</i>	3
<i>Քաղաքացիական ակտիվություն՝ Գեղարքունիքի մարզում՝ համայնքի կարիքների հասցեագրում</i>	3
<i>Նոր խարբերում լուծվեց հասարակական տրանսպորտի խնդիրը</i>	3
<i>Սուսեր համայնքը համախմբվում է լուծելու խնդիրը</i>	4
<i>ԵՅԳԾ Համայնքների համագործակցություն</i>	4

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 37 ակումբ եւ Համայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը Չուվաչենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202 բնակիչ
- Անցած երեք տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 1,500 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,000 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարդահամար, <http://www.armsat.am>

Սառնակույնք համայնքի խնդիրները՝ ներկայացված պատահանների միջոցով

Համայնքի խնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով, հուլիսին, Սառնակույնքի ԵԳԱ-ն (Սյունիքի մարզ) նախաձեռնեց պատրաստել համայնքի խնդիրները ներկայացնող պատահաններ: Մինչ պատահանների պատրաստումը ԵԳԱ անդամները համայնքում անցկացրեցին հետազոտություն՝ պարզելու այդ կապակցությամբ բնակիչների կարծիքը եւ առաջնահերթությունները: Այնուհետեւ, նրանք համապատասխան լուսանկարներ արեցին եւ պատրաստեցին 5 պատահաններ, որոնք փակցրեցին գյուղի մարդաշատ վայրերում: ԵԳԱ նախաձեռնությունը շատ լավ ընդունվեց համայնքի բնակիչների կողմից, որոնք ԵԳԱ անդամներին առաջարկեցին շարունակաբար թարմացնել այդ պատահանները՝ ընդգրկելով նաեւ այլ խնդիրներ: Հետեւելով այդ առաջարկին՝ ԵԳԱ անդամները պարբերաբար թարմացնում էին պատահանները՝ ներկայացնելով նաեւ այլ կարեւոր խնդիրներ: Պատահանների միջոցով ներկայացված խնդիրներից էին *ճանապարհների անապահովությունը, առանց*

խնամքի մնացած միայնակ ծերերը, տեղական արտադրանքի պակասումն շուկայի բացակայությունը, գյուղտնիսնիկայի պակասը, գոմերի անմխիթար վիճակը, աշխատուժի պակասը՝ առաջացած արտազան աշխատանքների նպատակով գյուղից միգրացիայի արդյունքում, եւ այլն: ԵԳԱ անդամների կողմից պատրաստած պատահանները համոզիչաբար տվյալ խնդիրների վրա համայնքի բնակիչների եւ ղեկավարների ուշադրությունը գրավելու եւ այդ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտության մասին հիշեցնելու արդյունավետ միջոց: Օգոստոսին, ԵԳԱ-ն կազմակերպեց հանդիպում առաջիկա ՏԻՄ ընտրություններին համայնքի ղեկավարի պաշտոնի համար իրենց թեկնածությունները ներկայացրած անձանց եւ համայնքի այլ բնակիչների հետ: Հանդիպման ժամանակ ԵԳԱ անդամները թեկնածուներին խնդրեցին իրենց տեսակետները ներկայացնել պատահաններում պատկերված խնդիրների վերաբերյալ եւ պարզաբանել, թե ինչ լուծումներ



ՍԱՐՆԱԿՈՒՅՆՔԻ ԿՐԻՏԱՆՆԵՐԻ ԳՐԱՊԻՍՏՅԱՆ

Սառնակույնք համայնքի խնդիրները պատկերող պատահան՝ պատրաստված Սառնակույնքի ԵԳԱ անդամների կողմից

Բանավեճ Գետափում. Հայաստան - Թուրքիա հարաբերություններ

Հուլիսին, Գետափի ԵԳԱ-ն (Վայոց Ձոր) նախաձեռնեց եւ կազմակերպեց բանավեճ Թուրքիայի հետ Հայաստանի սահմանի բացման եւ երկու երկրների միջեւ հարաբերությունների բարելավման թեմայով: Մինչ բանավեճի սկիզբը, ԵԳԱ նախագահ Լիլիթ Մարգարյանը համառոտ անդրադարձ կատարեց հայ-թուրքական հարաբերությունների ներկայիս վիճակին: Այնուհետեւ, մասնակիցները բաժանվեցին 2 խմբի, որոնցից մեկի անդամները կողմ էին Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի բացմանը եւ երկրների միջեւ հարաբերությունների բարելավմանը, իսկ մյուս խմբի անդամները դեմ էին դրան:

Ծավալվեց շատ աշխույժ բանավեճ: Հարաբերությունների բարելավման կողմնակիցները փորձում էին իրենց հակառակորդ խմբին համոզել, որ սահմանների բացումը կնպաստի տնտեսության զարգացմանը եւ ապրանքների էժանացմանը, իսկ հակառակ կողմը վիճում էր, որ սահմանի բացումը Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կնշանակի, որ մենք իրաժարվում ենք ցեղասպանության ճանաչման հարցից, բացի այդ, սահմանների բացման արդյունքում մեր շուկան կողողվի էժանագին թուրքական ապրանքով, ինչը

դժվարություններ կստեղծի տեղական արտադրողների համար: Բանավեճի ավարտին մասնակիցները դիտեցին Հայաստանի եւ Թուրքիայի երիտասարդների միջեւ համագործակցության մասին ֆիլմ, որը նրանց էր տրամադրել «Երիտասարդության դերը կամավորական աշխատանքներում» հայ-թուրքական ծրագրի (Կարս, Թուրքիա) մասնակից Տիգրան Միքայելյանը, ով եւս իրավիճակ էր բանավեճի եւ ցանկերով իր փորձը եւ տպավորությունները կիսել Գետափի երիտասարդների հետ: Մասնակիցները տպավորված էին ֆիլմով եւ նրանում ներկայացված՝

հայ եւ թուրք երիտասարդների համագործակցության օրինակներով: Քննարկման վերջում մասնակիցները շատերը փոխեցին երկու երկրների հարաբերությունների վերաբերյալ իրենց կարծիքը եւ արդեն չէին բացառում հայ եւ թուրք երիտասարդների միջեւ համագործակցության հնարավորությունը: Բանավեճը մասնակիցներին օգնեց հարթադրել հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ կարծառաստիպելու եւ մտածել հարևան ժողովրդի հետ բարոյացական հարաբերությունների հաստատման եւ համագործակցության հնարավորության մասին:

«Քաղաքացիական հասարակություն» խորագրով երիտասարդական ճամբար Սառնաղբյուրում



«Քաղաքացիական հասարակության սեկտորներ» թեմայով սեմինար՝ կազմակերպված Սառնաղբյուրի ԵԳԱ կողմից նախաձեռնված «Քաղաքացիական հասարակություն» խորագրով երիտասարդական ճամբարի ընթացքում:

Օգոստոսին, Սառնաղբյուրի ԵԳԱ-ն (Շիրակի մարզ) նախաձեռնեց եւ իրականացրեց «Քաղաքացիական հասարակություն» խորագրով եռօրյա երիտասարդական ճամբար համայնքի 20 երիտասարդների համար: Ճամբարի ընթացքում երիտասարդները մասնակցեցին հետևյալ թեմաներով սեմինարների. Քաղաքացիական հասարակություն, Առաջնորդություն, Մարդու իրավունքներ, Կամավորություն, ինչպես նաեւ տարբեր ուսուցողական խաղերի: Այս ամենը նպաստեց երիտասարդների գիտելիքների հարստացմանը, կամավորական աշխատանքներում նրանց ընդգրկմանը եւ նրանց քաղաքացիական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների էլ ավելի ակտիվ իրականացմանը:

Մեղրածրոցիները պաշտպանում են իրենց իրավունքները

Մեղրածրոցի ՅԳԳ-ի անդամները (Կոտայքի մարզ) տեղեկացել էին, որ գործարարների մի խումբ համայնքի ղեկավարների հետ միասին քննարկել եւ որոշել են Մեղրածրոցի համայնքի պահուստային հողերի վրա կառուցել ոսկու վերամշակման գործարան: Օգոստոսին, այս հարցը քննարկելու նպատակով, ՅԳԳ-ն կազմակերպեց ժողով, որին իրավիճակ էին նախագիծը առաջարկող գործարարները, ինչպես նաեւ համայնքի բնակիչները եւ ղեկավարները: Շրջակա միջավայրի աղտոտման, դրա արդյունքում գյուղի հետագա զարգացման հեռանկարների վտանգման եւ համայնքում գործարանի կառուցման հետ կապված այլ մտահոգությունների

ներկայացման եւ բուռն քննարկումների արդյունքում որոշվեց մերժել նախագծի իրականացումը գյուղի տարածքում եւ թողնել համայնքի պահուստային հողերը նորաստեղծ ընտանիքների համար: Իրենց հուզող հարցին դրական լուծում ստանալու փաստը բարձրացրեց մեղրածրոցիների ինքնավարությունը եւ ներշնչեց հավատ սեփական ուժերի նկատմամբ: Հանդիպման վերջում համայնքի բնակիչները նաեւ գիտակցեցին համայնքը համախմբելու եւ իրենց կարծիքներն ու տեսակետները բարձրածայնելու կարեւորությունը:



ԵՀԳԾ խմբերը զործում են խթանելու համայնքի բնակիչների քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին

Հուլիսին Սառնաղբյուրի ԵԳԱ-ն (Շիրակի մարզ) կազմակերպել էր քարոզարշավ, որն ուղղված էր քաղաքացիական և սահմանադրական իրավունքների վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկության բարձրացմանը և առաջիկա ՏԻՄ ընտրություններին նրանց մասնակցության խթանմանը: Քարոզարշավի շրջանակներում համայնքի երիտասարդների համար կազմակերպվել են սեմինարներ և համոզիչություններ, այդ թվում նաև առաջին անգամ ընտրողների համար սեմինարներ, ինչպես նաև ՀՀ Ընտրական օրենսգրքի, ընտրական ընթացակարգերի և ժողովրդավարական ընտրությունների սկզբունքների վերաբերյալ սեմինարներ: ԵԳԱ անդամները հուսով են, որ իրենց աշխատանքի արդյունքում համայնքի բնակիչները ընտրություններին կցուցաբերեն ակտիվ մասնակցություն:

Սեպտեմբերին Վերին Խոտանանի ՀՀԳ-ն (Սյունիքի մարզ) կազմակերպել էր սեմինարներ, բանավեճեր և քննարկումներ ընտրություններին վերաբերող թեմաներով՝ իրազեկելու և խրախուսելու համայնքի բնակիչներին մասնակցել

վերաբերյալ: ԵԳԱ անդամներն իրենց հարցերին գրավոր պատասխան ստացան 2 թեկնածուներից, որոնք նաև նշել էին, որ բարձր են գնահատում երիտասարդների դերը համայնքի կյանքում և հայտնել էին ԵԳԱ-ի հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը: ԵԳԱ-ն տարածեց թեկնածուների կողմից իրենց հարցերին տրված պատասխանները համայնքի երիտասարդության շրջանում, որպեսզի նրանք եւս տեղյակ լինեն թեկնածուների ծրագրերի և տեսակետների մասին և կարողանան ճիշտ ընտրություն կատարել և քվեարկել իրենց նախընտրած թեկնածուի օգտին: ՏԻՄ ընտրությունների նախաշեմին կրծվանիկի ՀՀԳ-ն (Սյունիքի մարզ) կազմակերպել էր «Ժողովրդավարության սկզբունքները» թեմայով սեմինար համայնքի բնակիչների համար՝ ներկայացնելու և քննարկելու ժողովրդավարության հիմնարար արժեքները և սկզբունքները, ինչպես նաև ընտրությունների հետ կապված օրենքները և ընթացակարգերը: Սեպտեմբերի 26-ին կազմակերպված սեմինարը վարեց

ցել առաջիկա ՏԻՄ ընտրություններին: ՀՀԳ անդամները նաև ստուգել են ընտրացուցակները և ծանուցագրեր ուղարկել բոլոր ընտրողներին՝ ասելով, որ իրենց անունը ընտրացուցակում է և հրավիրելով նրանց քվեարկելու ընտրությունների օրը: ՀՀԳ անդամները համոզված են, որ իրենց կազմակերպած քարոզարշավը արդյունավետ էր, և, որ իրենց հաջողվեց հաղթահարել համայնքի բնակիչների պասիվությունը, և ընտրությունների օրը նրանք կգնան ընտրատարածք՝ իրականացնելու իրենց քաղաքացիական իրավունքը:

Հուլիսին Գետափի ԵԳԱ-ն (Վայոց Ձորի մարզ) պատրաստել և գյուղապետի պաշտոնի համար առաջադրված 3 թեկնածուներին ուղարկել էր հարցաթերթիկներ, որոնցում ներառված էին հարցեր՝ վերաբերող թեկնածուների ծրագրերին և համայնքի առաջնային խնդիրների լուծման համար նրանց կողմից առաջարկվող քայլերին, ինչպես նաև նրանց տեսակետներին՝ տեղական ինքնակառավարման զործնթացներում համայնքի երիտասարդների և այլ բնակիչների ներգրավման



«Ժողովրդավարության սկզբունքները» թեմայով սեմինար՝ կազմակերպված Արծվանիկի ՀՀԳ-ի կողմից

«Ընտրությունը քունն է» ՀԿ-ի ներկայացուցիչ Անժելա Մաթյանը: Սեմինարին հրավիրված էին նաև նորընտիր գյուղապետը և ավագանու թեկնածուները: Սեմինարի մասնակիցները ծանոթացան ՀՀ ընտրական օրենսգրքի հիմնական դրույթներին, քննարկեցին ընտրակարգերի, ընտրելու իրավունքի և ընտրությունների հետ առնչվող այլ հարցեր: Սեմինարի 2-րդ մասում ՀՀԳ անդամների առաջարկված մասնակիցները քննարկեցին համայնքի առաջնային խնդիրները և ստացան ավագանու թեկնածուների տեսակետները դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ:

Քաղաքացիական ակտիվություն Գեղարքունիքի մարզում. ՀՀԳ-ն հասցեագրում է համայնքի կարիքները

Հուլիսին Ծովագյուղի ՀՀԳ-ն (Գեղարքունիքի մարզ) անդրադարձավ համայնքի երեխաների կողմից՝ «Ծովագյուղի խնդիրները երեխաների աչքերով» նկարների ցուցահանդեսի ժամանակ (2008թ. ապրիլ) բարձրացված հարցերից մեկին՝ համայնքի աղտոտվածությանը: ՀՀԳ անդամները՝ մոբիլիզացնելով համայնքի բնակիչներին, գյուղի տարածքում նախաձեռնեցին և իրականացրեցին աղբահանության ակցիա: ՀՀԳ-ն դիմեց նաև գյուղապետին՝ խնդրելով տրամադրել գյուղի տարբեր վայրերում կուտակված աղբը հեռացնելու համար համապատասխան տեխնիկա: Գյուղապետը պատրաստակամություն հայտնեց աջակցելու ՀՀԳ նախաձեռնությանը, իսկ Ծովագյուղի միջնակարգ դպրոցի

տնօրինությունը, իր հերթին, պատրաստակամություն հայտնեց տրամադրել տեխնիկայի համար անհրաժեշտ վառելիքը: Համայնքի և ՀՀԳ անդամների միահամուռ ջանքերի շնորհիվ աղբահանության ակցիան հաջողությամբ իրականացվեց Ծովագյուղում: Ներկայումս ՀՀԳ անդամներն աշխատում են համայնքում աղբահանության կանոնավոր մեխանիզմի մշակման և ներդրման ծրագրի վրա:



Օգոստոսին Ծովագարդի ՀՀԳ անդամները (Գեղարքունիքի մարզ) տեղական հեռուստաընկերությունից տեղեկացան, որ Գեղարքունիքի մարզպետարան նախագիծ է ներկայացվել ըստ որի, նախատեսվում է միավորել Գավառի տարածքի երեք բուժաստատությունները՝ Գավառի պոլիկլինիկան, հիվանդանոցը և ծննդատունը: Որոշակի խնայողությունների ակնկալիքներով որոշվել է երեք հաստատությունները տեղակայել մեկ շենքում, մինչդեռ այդ հաստատությունների ծառայություններից օգտվում է ողջ Գավառ մարզկենտրոնի և հարեան համայնքների բնակչությունը՝ ներառյալ Ծովագարդի: Ծովագարդի ՀՀԳ անդամները որոշեցին իրենց անհամաձայնությունը հայտնել այդ նախագծի կապակցությամբ:

Նրանք նամակ պատրաստեցին և ուղարկեցին կառավարություն՝ արտահայտելով իրենց մտահոգությունները տվյալ նախագծի և դրա իրականացման հետևանքում ստեղծվող վիճակի վերաբերյալ: Մասնավորապես, նրանք խնդրել էին բացատրել, թե ինչպես այդ միավորումը կնպաստի բնակչության մատուցվող բուժառաջարկությունների որակի բարելավմանը: Այս նամակով ՀՀԳ-ն միացել էր մի շարք ՀԿ-ների, ինչպես նաև Գավառի և հարեան համայնքների բնակիչների ծայրին, որոնք եւս իրենց դժգոհությունն էին հայտնել որոշման նախագծի կապակցությամբ: Այսպիսով, նախագիծը՝ բացասական արձագանքի և լրբիհոգի արդյունքում, որին միացել էր նաև Ծովագարդի ՀՀԳ-ն, չընդունվեց:

Նոր Խարբերոլում լուծվեց հասարակական տրանսպորտի խնդիրը

Նոր Խարբերոլ համայնքի (Արարատի մարզ) հանրային տրանսպորտի վիճակը բարելավելու նպատակով ՀՀԳ-ի կողմից համայնքում նախաձեռնված ստորագրահավաքի և գյուղապետարան ուղարկված նամակի արդյունքում սեպտեմբեր ամսին համայնքին տրամադրվեց 16 ավտոբուս: N33 և N105 միկրոավտոբուսները փոխարինվեցին ավտոբուսներով, ինչպես նաև փոխվեց N33 ավտոբուսի ուղին՝ ավելի

լավ ծառայելու Նոր Խարբերոլ համայնքի բնակիչների կարիքներին: Այսպիսով, ՀՀԳ անդամների նախաձեռնության և համայնքի բնակիչների ակտիվ մասնակցության և ներգրավման արդյունքում համայնքում լուծվեց եւս մեկ կարևոր խնդիր:



Երեւան Նոր-Խարբերոլ ավտոբուսը՝ տրամադրված համայնքին Նոր Խարբերոլի ՀՀԳ-ի կողմից նախաձեռնված քարոզարշավի արդյունքում

Կրթությանը զարգացման ակադեմիա
 Այգեժոր 10,
 0019 Երևան
 Հայաստանի Հանրապետություն
 Դեռ.՝ (374 10) 225 636
 Ֆաքս՝ (374 10) 275 686
 Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Մեր ուսուկայքերն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

Սուսեր համայնքը համախմբվում է լուծելու ջրի խնդիրը

Օգոստոսին Սուսերի ՀԳՀ-ն (Արագածոտնի մարզ) լուծեց համայնքի առաջնային խնդիրներից մեկը՝ խմելու ջրի խնդիրը: Ամիսներ շարունակ գյուղում կանոնավոր չէր ջրամատակարարումը, եւ գյուղի որոշ թաղամասերի բնակիչներն ընդհանրապես զրկված էին խմելու ջրից: Այս հարցի լուծման համար ՀԳՀ անդամները նախ դիմեցին գյուղապետարան՝ ճշտելու, թե արդյոք համայնքի բյուջեում կա ջրամատակարարման համակարգի վերանորոգման համար բավարար գումար: Գյուղապետարանից ՀԳՀ-ն ստացավ պատասխան, որ նրանք տեղյակ են իրավիճակի մասին, սակայն չեն կարող ոչինչ անել ֆինանսական միջոցների սղության պատճառով: ՀԳՀ-ն որոշեց կազմել գործողությունների պլան, մտքի լիզացնել համայնքի բնակիչներին եւ համայնքապետարանը, կազմակերպել դրամահավաք, ձեռք բերել անհրաժեշտ նյութերը եւ վերանորոգել ջրամատակարարման համակարգը: Գործողությունների պլանը կազմելուց հետո ՀԳՀ-ն համայնքի անդամներին տեղեկացրեց ծրագրի եւ առաջարկվող քայլերի մասին:

Կազմակերպվեց դրամահավաք՝ գումարի որոշ մասը տրամադրվեց գյուղապետարանի կողմից, մյուս մասը՝ համայնքի բնակիչների, եւ ձեռք բերվեցին անհրաժեշտ նյութերը: Ջրատարի վերանորոգման աշխատանքները սկսվեցին օգոստոսի վերջին: Համայնքի մոտ 40 անդամ, այդ թվում նաեւ ՀԳՀ անդամները, ակտիվորեն մասնակցեցին ջրատար համակարգի վերանորոգման աշխատանքներին: Սեպտեմբերին աշխատանքն ավարտվեց եւ համակարգը փորձարկվեց: Ներկայումս ջրամատակարարումը վերականգնված է Սուսեր գյուղում, եւ բնակիչներն ապահովված են խմելու ջրով: ՀԳՀ-ի, համայնքի այլ բնակիչների եւ համայնքապետարանի միահամուռ ուժերով իրականացված ծրագիրը խթանեց համայնքի անդամների միջեւ համագործակցությունը, եւ, որն ամենակարեւորն է՝ նպաստեց նրանց ինքնավստահության եւ համայնքի խնդիրներն ինքնուրույն՝ առանց որեւէ արտաքին աջակցության եւ ֆինանսավորման, լուծելու իրենց ներուժի եւ կարողությունների նկատմամբ վստահության բարձրացմանը:

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է **ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարելիությունը:**

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

ԵՀԳԾ համայնքների համագործակցություն

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիրն աջակցում է ԵՀԳԾ Համայնքների համագործակցության մեխանիզմի (ՀՀՄ) ստեղծմանը, որի նպատակն է խթանել ԵՀԳԾ 80 քաղաքացիական խմբերի միջեւ համագործակցությունը, նպաստել տեղեկությունների, փորձի եւ գաղափարների փոխանակմանը, ինչպես նաեւ քաղաքացիական նախաձեռնությունների համատեղ պլանավորմանը եւ իրականացմանը: ԵՀԳԾ-ն աջակցում է ՀՀՄ ստեղծման նախաձեռնությանը՝ կազմակերպելով ստեղծվող կառույցի նպատակի, կառուցվածքի, ընթացակարգերի մշակման եւ հետագա գործունեության պլանավորմանն ուղղված աշխատանքային հանդիպումներ: Արդյունքում ստեղծվող ՀՀՄ-ն որոշվում է սահմանվում է մասնակից համայնքների կողմից: ԵՀԳԾ-ն միայն աջակցում է ՀՀՄ-ի ստեղծմանը եւ հետեւում, որ գործընթացը լինի ժողովրդավարական, թափանցիկ եւ արդար, եւ որ ստեղծվող ՀՀՄ-ն ծառայի անդամ համայնքներին: ՀՀՄ ստեղծման առաջին աշխատանքային հանդիպումը տեղի ունեցավ 2008թ. հուլիսի 10-11-ը Օաղկաձորում: Հանդիպմանը մասնակցում էին ներկայացուցիչներ ԵՀԳԾ բոլոր 80 համայնքներից: Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվել եւ իրականացվել են ՀՀՄ մարզային ենթահանձնաժողովների հանդիպումներ մարզերում եւ ՀՀՄ մշակման հանձնաժողովի հանդիպումներ Երեւանում: ՀՀՄ մշակման հանձնաժողովի անդամներն են ՀՀՄ մարզային ենթահանձնաժողովներից ընտրված 10 պատվիրակներ, որոնք ներկայացնում են իրենց մարզի ԵՀԳԾ 8 համայնքները: Ներկայումս ՀՀՄ մշակման հանձնաժողովը ավարտել է ՀՀՄ առաքելության, նպատակների, կառուցվածքի եւ ընթացակարգերի մշակման ուղղությամբ տարվող աշխատանքները եւ սկսել է հետագա գործունեության պլանավորման եւ ծրագրերի մշակման աշխատանքները:



80 ԵԳԱ/ՀԳՀ-ների ներկայացուցիչները ՀՀՄ ստեղծման առաջին աշխատանքային հանդիպման ժամանակ, Օաղկաձոր, Հայաստան